ԱՆՆԱ ԹՈՒՄԱՍՅԱՆ

ԳՈՒՆԱՊԱՏԿԵՐՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՉ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Գունը ընկալումը մեր ուղեղում է,
սակայն գույները մեր լեզվի և
մեր մշակույթի արտադրանքն են: (1. է. 6)

Գույները մեր կյանքում շատ կարևոր դեր են կատարում, քանի որ ինչպես և մեր մտքերը, այնպես էլ լեզվի հարստությունը կախված են գունային բազմազանությունից: Մենք ապրում ենք գունավոր աշխարհում, իսկ ընկալումն անհնարին կլիներ, եթե թափանցիկությունից արտահայտիչ տարբերություն չլիներ (2, 175): Մենք տեսնում ենք առարկաները, որոնք մեր ուղեղում արդեն որոշակի գույնով են հանդես գալիս: Այս կամ այն առարկայի մասին մտածելիս մենք արդեն իսկ պատկերացնում ենք դրա գույնը: Առարկաների գույները չափսի և ձևի հետ միասին մեր ուղեղում ֆրեյմեր են կազմում, որոնք իրենց լեզվական արտահայտությունն են ստանում խոսքում: Անգլերենից թարգմանաբար ֆրեյմը նշանակում է շրջանակ, կմախք, կաղապար: Ֆրեյմերի տեսության մեջ ուսումնասիրվել է հաղորդակցության սցենարային կառուցվածքը, այսինքն՝ խոսքային միավորների վերարտադրումը հաղորդակցության ժամանակ: Եթե խոսքում չլինեին այնպիսի երևույթները, ինչպիսիք են փոխաբերությունը, դարձվածքներն և այլն, ապա հաղորդակցությունը զուրկ կլիներ իրեն հատուկ մեխանիկական բնույթից և ավելորդ մտավոր լարվածություն կստեղծեր զրուցակիցների մոտ: Այնպիսի գիտնականների կարծիքով, ինչպիսիք են Մ. Մինսկին և Չ. Ֆիլմորը, մարդու հիշողության մեջ գոյություն ունեցող ֆրեյմերը առաջացել են հասարակության մեջ ապրելու և շփվելու ընթացքում կուտակած փորձից: Նմանատիպ ֆրեյմեր կան ինչպես ընթեցողի, այնպես էլ գրողի ուղեղում: Հետևապես, երբ հեղինակը գրում է «տերևի» մասին, նա ակտիվացնում է այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են գույնը, չափսը կամ ձևը, իսկ երբ ընթեցողը կարդում է «տերևի» մասին, նրա մոտ նույնպես ակտիվանում են այդ հատկանիշները: Այլ կերպ ասած՝ «տերև» բառը ստիպում է ընթերցողին տեսնել «տերևը» այն գույնով, որը մեկ անգամ տպավորվել է մեր ուղեղում, ինչպես օրինակ՝ «տերև» պարզապես ասելիս մենք կպատկերացնենք կանաչ գույնը, իսկ «աշնանային տերև» ասելիս՝ դեղին:

Գույները տարբեր նշանակություն ունեն տարբեր ազգերի և մշակույթների համար: Մենք բոլորս ունենք մեր նախընտրած գույները: Գույները կարող են շատ բաներ խորհրդանշել՝ զգացմունքներ, մարդկանց, երկրներ, մշակույթներ: Տարբեր մշակույթներ տարբեր գունային խորդրդանիշներ ունեն: Օրինակ՝ շատ երկրներում /Հայաստանում, ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում/ սգո գույն է համարվում սևը, որովհետև այն խորհրդանշում է ինչ-որ վատ բան, «սև ուժեր»: Սակայն օրինակ Հնդկաստանում սգո խորհրդանիշը սպիտակն է, որը հակառակը եվրոպական երկրներում, Հայաստանում և ԱՄՆ-ում անմեղության և մաքրության խորհրդանիշն է, այդ իսկ պատճառով ամուսնության ժամանակ հարսի զգեստը սպիտակ է: Նույնիսկ հրեշտակներ պատկերացնելիս մեզ մոտ ուղեղում նրանք սպիտակ կամ մարմնագույն հանդերձանքով են հայտնվում: Կարմիր գույնը ավելի գրավիչ գույն է և միևնույն ժամանակ վտանգավոր, քանի որ զուգորդվում է արյան ու կրակի հետ, այդ իսկ պատճառով վտանգ էլ է իր մեջ պարունակում: Իսկ Հնդկաստանում հարսերը կարմիր զգեստ՝ «սարի» են կրում հարսանեկան արարողության ժամանակ:

Գույները իրենց խորհրդանշության հատկությամբ նաև շատ կարևոր են բազմաթիվ ընկերությունների համար, քանի որ այս կամ այն գույնը մեզ համար դառնում է ինչ-որ կազմակերպության խորհրդանիշը: Օրինակ՝ դեղին և սև գծեր տեսնելիս հայերի մեծամասնությունը կպատկերացնի «Բիլայն» ընկերությունը, կարմիր գույնը մյուս կողմից խորհրդանշում է «ՎիվաՍել ՍՏՍ» ընկերությունը, իսկ նարնջագույնը այժմ դարձել է «Օրանժ» ընկերության խորհրդանիշը: Իհարկե գունային խորհրդանշությունից զերծ չի մնացել նաև եկեղեցին, քանի որ գույները շատ տարբեր իրեր և հասկացություններ են խորհրդանշում, օրինակ՝ սևը՝ չար ուժեր, մահ, կապույտը՝ դրախտը: Կարող ենք նաև ենթադրել, որ այս կամ այն ազգի գունային խորհրդանշությունը առաջին հերթին կապված է կրոնի մեջ գույների ստացած իմաստի հետ:

Ինչ վերաբերում է գունապատկերումների օգտագործմանը տեքստում, կարելի է ասել, որ քանի որ գույները մեր կյանքում կարևոր տեղ են զբաղեցնում, ապա դրանք նաև մեծ զուգորդական դաշտ են ստեղծում և հետևաբար, լայն օգտագործվում են ցանկացած տիպի տեքստերում:

Գունապատկերումների օգտագործման հաճախականությունը պարզելու համար մենք կտարբերակենք գեղարվեստական և ոչ գեղարվեստական տեքստեր, քանի որ թե դրանց օգտագործման առանձնահատկությունները, թե օգտագործման հաճախականությունը տարբերվում են տվյալ տեքստերում:

Սովորաբար ոչ գեղարվեստական տեքստերում գունապատկերումները շատ ավելի քիչ են օգտագործվում, քան գեղարվեստականներում, եթե

միայն ոչ գեղարվեստական տեքստերում գունապատկերումները կարևոր դեր չեն խաղում, ինչպես օրինակ ներկերի, դիմահարդարման պարագաների և այլ կատալոգներում: Այսպիսի դեպքերում գունապատկերումները սովորաբար զուգադրվում են գունային նմուշով: Նմանատիպ օգտագործմանը հակառակ, երբ գունապատկերումները օգտագործվում են արվեստի քննադատների, ինչպես նաև արվեստի պատմության մասնագետների կողմից, ապա այս դեպքում գործ ունենք լսողի կամ տեսնողի երևակայության հետ: Երբ օրինակ քննադատները օգտագործում են գունապատկերումները այս կամ այն ստեղծագործության, նկարի վերաբերյալ կարծիք գրելիս նրանք իրականում շատ սահմանափակ քանակությամբ գունապատկերումներ են կիրառում, այսպես կոչված հիմնական գունապատկերումները՝ կարմիր, կապույտ, սև, սպիտակ, կանաչ (Kay & McDaniel, 1978; Kay & Maffi, 1999): Նրանք կարող են պարզապես դրանց տարբեր երանգներն օգտագործել նկարագրությունն ավելի տպավորիչ դարձնելու համար: Այս դեպքում գունապատկերումները ոչ թե նկարագրում են այս կամ այն ստեղծագործությունը կամ նկարի գույնը, այլ առաջարկում են դրա մասին որոշակի պատկերացում, խթանիչ բնույթ են կրում: Նկարիչները նույնպես իրենց նկարները անվանելիս զերծ են մնում գույների երանգները օգտագործելուց, որպես օրինակ կարող ենք բերել Ֆրանց Մարկի՝ "Two cats, Blue and Yellow" (1912), Ջեյմս էբոթ Մաքնեյլ Ուիսլերի՝ "Nocturne in Black and Gold: The Falling Rocket" (1870s), Սեկսան Սինգոնի՝ "White Lotus Stream" (2005) կտավների անվանումները: Ակնարկելու հատկանիշը կարևորվում է հենց նորածնության և դիմահարդարման միջոցները անվանելիս, քանի որ ամբողջությամբ կախված է ընթերցողի՝ գնորդի երևակայությունից, թե նա ինչ գույն կպատկերացնի «արև, երկինք, ձմեռ, աշուն և այլ» անվանումների դեպքում: Բացի այդ անվանելիս կոնկրետ գունապատկերումներ օգտագործելը, օրինակ նորածնության մեջ, ոչ միայն երանգն է կոնկրետացնում, այլև որոշակի միջավայր է ստեղծում, միջավայր, որը տրամադրություն է ստեղծում, որն էլ իր հերթին օգնում է ապրանքի վաճառքին, քանի որ ճիշտ ընտրված նկարագրությունը ավելի ցանկալի արդյունքների կարող է հանգեցնել: Օրինակ՝ «հուզիչ կարմիր», «Rose Petal, Rose Crimson, Baby Rose» և նմանատիպ արտահայտությունները համոզում են կանանց՝ քանզի կանայք սովորաբար ավելի շատ են սիրում գնումներ կատարել, որ այս կամ այն ապրանքը կրելիս /տվյալ անվանումով/ նրանց կդարձնի ավելի ցանկալի, տենչալի և հաջողակ: Գույները և գունապատկերումները լիովին այլ բնույթ ու գործառույթ ունեն գեղարվեստական տեքստերում: Ինչպես նշում է Բայլորը. «Հարուստ գունային գամաները, որոնք մենք տեսնում ենք մեր նյարդային

համակարգի արտադրանքն է: Գույնը, ինչպես գեղեցկությունը կրողի աչքերում և ուղեղում է»(3,113-118): Գունանունն է, որը ուղեղում արթնացնում է գույնի պատկերը, և ոչ թե աչքերից եկած ինֆորմացիան, ինչը կգործեր սովորական տեսողական գործառույթի ժամանակ: Իսկ ինչպես Լայոնզն է նշում. «Գույները այս կամ այն լեզվի բառաբերականական համակարգի արտադրանքն են»: (4,197) Սա նշանակում է, որ ընթերցողը իրականում պետք է հույսը դնի իր գունային հիշողության վրա, որպեսզի ուղեղում պատկերացնի ինչ-որ գույն կամ գունային երանգ: Սովորաբար մենք գույնը ընկալում ենք որպես այս կամ այն առարկայի անբաժանելի մի մաս, օրինակ՝ կանաչ խոտ, կարմիր արյուն, կապույտ երկինք և այլն:

Ընդհանրապես կարելի է ասել, որ գունապատկերումները ավելի հաճախ օգտագործվում են գեղարվեստական տեքստերում, քան ոչ գեղարվեստականներում և դրանց գործառույթը հիմնովին տարբերվում է ոչ գեղարվեստականներում դրանց ցուցաբերած գործառույթից: Նույնիսկ գեղարվեստական տեքստերում, ինչպիսիք են վեպը, պատմվածքը, բանաստեղծությունը, օգտագործված գունապատկերումները և դրանց օգտագործման հաճախականությունը կախված է հեղինակից: Օրինակ՝ հայ անվանի բանաստեղծ Վահան Տերյանը աշնանային տեսարանների մեծ սիրահար էր: Իր բանաստեղծություններում տեղ գտած ոսկեգույնը ոչ միայն բնութագրում է եղանակային պայմանները, այլև տրամադրություն է ստեղծում, յուրահատուկ մթնոլորտ, իսկ տերևների շրշյունի նկարագրությունը յուրովի հմայք է տալիս իր ստեղծագործություններին՝ ավելի պատկերավոր դարձնելով տեսարանը, և իր տրամադրությունը: Բացի այդ նրա բանաստեղծություններում կարելի է գտնել կապույտ գույնը, որը հանդես է գալիս երկնքի դերում, իսկ օրինակ սև գույնը բնորոշ է միայնության և տխրության պատկերներին: Սրան հակառակ կարմիր ու կանաչ գույները զուգորդվում են կյանքի զարթոնքի, բնության վերակենդանացման հետ՝ ինքնին բնորոշելով ոգևորվածություն: Օրինակ՝

Կապույտ ծածկոցն իջավ ցած,-
Մեղմ ու անուշ իրիկուն.
Վառիր լույսդ, վաղ անցած.
Լուսե ցնորք իմ հոգում:
Ամայացած իմ սրտում,
Սենության մեջ իմ սև տան
Փոիր քնքուշ ու տրտում
Ժպիտը քո խնդության /5,181/:
... Սրտիս ժպտաց քո հեռուն,
Տխուր ծաղիկ, սև շուշան /5,177/:
Գարնան խոսքերով կարմիր ու կանաչ,
Դու ինձ կանչեցիր դեպի քո հեռուն /5,75/:

Հարկ ենք համարում նաև բերել մի քանի օրինակ անգլիացի գրող Էդգար Ալլան Պոյի ստեղծագործություններից, որտեղ գունապատկերումները նույնպես լայն գործածություն ունեն:

I could have clasped the red walls to my bosom as a garment of eternal peace. (6,82) Ես արդեն պատրաստ էի հավերժական անդորրի կարմիր պատանքի պես սեղմել զնդանի շիկացած պատերը (7,83):

There was blood upon her white robes, and the evidence of some bitter struggle upon every portion of her emaciated frame(6,25) Նրա սպիտակ պատանքն արնոտված էր, հյուծված մարմինը հուսահատ պայքարի հետքեր էր կրում(7,111):

Վերը նշված առաջին օրինակում կարմիր գույնը մթության մեջ միակ լույսի աղբյուրն է, սակայն և մահացու, քանի որ այդ լույսը շիկացած պատերն են արձակում, հետևաբար այստեղ հեղինակը ցանկացել է ընդգծել իրավիճակի վտանգավոր լինելը: Հաջորդ օրինակում արդեն գործ ունենք երկու գույների հակադրության հետ, մի կողմից սպիտակ գույնն է, որը մաքրության, կյանքի խորհրդանիշն է, մյուս կողմից էլ արյունը, որը նույնպես կյանքի խորհրդանիշ է, բայց ահա տվյալ իրավիճակում այն մահվան և վտանգի դեր է կատարում: Այստեղ նույնպես գործ ունենք ահ ու սարսափ առաջացնող տեսարանի հետ:

Գեղարվեստական տեքստերում գունապատկերումների գլխավոր գործառույթը ինչ-որ տեսարան նկարագրելն է, որը ընթերցողի ուղեղում այդ տեսարանը պատկերում է իր ամբողջ գունագեղությամբ, գունային պատկերներով, ոչ միայն որպես վայրի նկարագիր, այլև որպես իրականությանը մոտ կամ համարժեք պատկեր, որտեղ գունապատկերները ընկալելի գույներ են: Իսկ երբ գույները կամ դրանց անվանումը ստանում է փոխաբերական իմաստ, ապա առաջ է գալիս գունապատկերումների մեկ այլ գործառույթ՝ իմաստ կամ միջավայր տեքստում ստեղծելու գործառույթ: Հենց այս գործառույթն է պատճառ հանդիսանում, որ գեղարվեստական տեքստերում գույները այդքան կարևոր դեր են կատարում և հետևաբար ավելի հաճախ են գործածվում:

---

1. Lamb T., Bourriau J., Colour: Art and Science, Cambridge (CUP), 1995.-224p.
2. Wyler S.,Colour and Language–Colour Terms in English, Tübingen: Narr,1992. - 364p.
3. Wyler S., Colour terms between elegance and beauty// Speaking of colours and odors, John Benjamin Publishing Company, 2007.-113-118p
4. Lyons J., Colour in language, 1995
5. Տերյան Վ., Բանաստեղծություններ,-Եր.: Սովետ. գրող, 1985.-512էջ
6. Edgar Allan Poe, Tales of Mystery and Imagination, Pan Books Ltd, 1979. - 224p.
7. Էդգար Ալլան Պո, Անուրջներ և Սղձավանջներ, Եր. Սովետական Գրող, 1983.-156էջ
8. Wyler S., Colour terms in the crowd: colour terms in use, Tübingen: Narr, 2006.-214p.
9. http://vak.ed.gov.ru/common/img/uploaded/files/vak/announcements/pedagogicheskie/17-11-2008/SHlyakhovVI.doc.